# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 54-Լ

«01» 08 2025թ. գ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի N 51-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հրամայում եմ՝**

1. «Դատախազների թեկնածությունների 2025 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման առաջին հատվածի «Քրեական իրավունքի արդի հարցեր» դասընթացի գրավոր քննության արդյունքները գնահատելու, արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար գնահատման ու բողոքարկման հանձնաժողովներ ձևավորելու մասին» ՀՀ գլխավոր դատախազի 2025 թվականի հուլիսի 16-ի թիվ 51-Լ հրամանի 1-ին կետում՝

**«Արմեն Փանոսյան** - ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ,»

տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**Վահան Սարգսյան** – Արմավիրի մարզի դատախազ,» :

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր

քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Արդարադատության ակադեմիայի ռեկտորին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ